ՆԱԽԱԳԻԾ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

_____2025թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԳԱՅԱՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԱԼԼԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ
ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՆՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով, 17-րդ և 33-րդ կետերով և 70-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Ռուսթավելի փողոցի հ.112 հասցեում հաշվառված Գայանե Պետրոսյանին և Ռուսթավելու նրբանցքի հ.20 հասցեում հաշվառված Ալլա Մանուկյանին տրամադրել բնակարանի գնման վկայագրեր:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Գայանե Պետրոսյանին և Ալլա Մանուկյանին տրամադրել բնակարանի գնման վկայագրեր՝ Երևան քաղաքի ավագանու կողմից սահմանված պահանջներին համապատասխան՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2025 թվականի - -ի
N Ա որոշման

ՊԱՀԱՆՋՆԵՐ

ԳԱՅԱՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԱԼԼԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՆՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Սույնով կարգով սահմանվում են Երևան քաղաքի Ռուսթավելի փողոցի հ.112 և Ռուսթավելի նրբանցքի հ.20 հասցեներում հաշվառված Գայանե Պետրոսյանին և Ալլա Մանուկյանին (այսուհետ՝ Շահառու) բնակարան ձեռք բերելու համար բնակարանի գնման վկայագրի (այսուհետ՝ Վկայագիր) միջոցով ֆինանսական աջակցության տրամադրելու հետ կապված հարաբերությունները:
2. Վկայագիրը Երևանի քաղաքապետի կողմից հաստատված ձևաթղթին համապատասխան կազմված անվանական փաստաթուղթ է, որը հավաստում է վկայագիր ստացած անձի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից պատրաստի կամ կառուցվող շենքից բնակարան ձեռք բերելու (բնակելի տան) համար անհատույց ֆինանսական աջակցություն (այսուհետ՝ աջակցություն) ստանալու իր իրավունքը:
3. Ռուսթավելի փողոցի հ.112 հասցեում հաշվառված Գայանե Պետրոսյանին և Ռուսթավելի նրբանցքի հ.20 հասցեում հաշվառված Ալլա Մանուկյանին տրամադրվում են 35.0քմ մակերեսի համար նախատեսված բնակարանի գնման վկայագրեր՝ 1.0քմ մակերեսի համար սահմանելով 402.000 (չորս հարյուր երկու հազար) ՀՀ դրամ, յուրաքանչյուրին՝ 14.070.000 (տասնչորս միլիոն յոթանասուն) ՀՀ դրամի չափով: Բնակարանների 1քմ արժեքի համար հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի հ.1521-Ն որոշմամբ սահմանված արժեքները:
4. Վկայագիրը պարունակում է հետևյալ պարտադիր վավերապայմանները՝

1) վկայագրի թողարկման սերիան, որը կազմվում է հասցեի և համապատասխան բնակարանը նկարագրող հապավումից համապատասխանաբար՝ Ռ/112 և Ռ/20,
2) վկայագիրը տրամադրող մարմնի անվանումը, տրամադրման ամսաթիվը.
3) աջակցություն ստացող անձանց անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը անձնագրային տվյալները.
4) տրամադրվող աջակցության չափը.
5) վկայագրի միջոցով բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման (առուվաճառքի պայմանագրի կնքման) ժամկետը:

5. Վկայագիրը տրամադրվում է կամավորության սկզբունքով: Այն արժեթուղթ չէ և ենթակա չէ օտարման, գրավադրման, բռնագանձման ու այլ անձի փոխանցման:

6. Վկայագրում նշվող աջակցության գումարը բնակարանի նկատմամբ միանձնյա սեփականության իրավունքի գրանցման պարագայում՝ տվյալ անձի սեփականությունն է:

7. Վկայագիրը տրամադրվում է մեկ օրինակից և վկայագրով սահմանված բնակարանի գնման համար նախեստեսված ժամկետը հնարավոր է վերանայել միայն մեկ անգամ:

8. Վկայագրի կորստի դեպքում, վկայագիր ստացած անձի դիմումի հիման վրա, կորցրած վկայագիրը սահմանված կարգով անվավեր է ճանաչվում, և դրա փոխարեն այդ անձին տրամադրվում է նոր վկայագիր:

9. Վկայագրի միջոցով աջակցությունը ցուցաբերվում է վճարումների ձևով, շահառուների և ձեռք բերվող գույքի սեփականատերերի միջև՝ սահմանված կարգով՝ վկայագրի միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար աջակցություն ստանալու մասին կնքված պայմանագրի հիման վրա՝ բնակարանի արժեքը (բայց ոչ ավելի, քան վկայագրում նշված աջակցության չափը) վճարելով բնակարան (բնակելի տուն) վաճառողին՝ նրա կողմից ներկայացված հաշվեհամարին փոխանցելու միջոցով, իսկ վկայագրում ամրագրված աջակցության չափից ցածր արժողությամբ բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման դեպքում արժեքների տարբերությունը փոխանցվում է շահառուին՝ նրա կողմից ներկայացված հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

10. Վկայագրի միջոցով ձեռք բերված բնակարանը (բնակելի տունը) սեփականության իրավունքի գրանցման պահից հաշված՝ 2 տարվա ընթացքում չի կարող վաճառվել, նվիրվել, գրավ դրվել կամ օտարվել այլ եղանակով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԳԱՅԱՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԱԼԼԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՆՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի Սպանդարյանի շրջխորհրդի գործադիր կոմիտեի նախագահի հետ 1989 հունիսի 13-ին կնքված պայմանագրի համաձայն՝ Ռուսթավելի փողոցի հ.112 հասցեում գտնվող 16.0քմ մակերեսով բնակարանում բնակվող 4 անձից բաղկացած ընտանիքին նախատեսվել էր տրամադրել բնակարան: Քաղաքացի Բարսեղ Բարսեղյանը մահացել է /հիմք՝ հ.293683 մահվան վկայական/, իսկ Աննա և Ջուլիետա Բարսեղյանները ներկայացրել են համաձայնություններ /հ.հ. 19976, 19977/ Գայանե Պետրոսյանին բնակարանի գնման վկայագիր տրամադրելու մասին:

Երևանի Սպանդարյանի շրջխորհրդի գործադիր կոմիտեի 1989 թվականի դեկտեմբերի 29-ի հ.38/19 որոշման համաձայն՝ Ռուսթավելու նրբանցքի հ.20 հասցեում գտնվող 30.0քմ մակերեսով բնակելի տանը հաշվառված են եղել 6 անձ, որոնցից 3 անձից բաղկացած ընտանիքին հատկացվել էր բնակարան, իսկ Ալլա, Գրիգորի և Սուրեն Մանուկյանների հարցը մնացել է չլուծված: Քաղաքացիներ Գրիգորի և Սուրեն Մանուկյանները ներկայացրել են համաձայնություններ /հ.հ. 19915, 19914/ Ալլա Մանուկյանին բնակարանի գնման վկայագիր տրամադրելու մասին:

Ռուսթավելի փողոցի հ.112 և Ռուսթավելու նրբանցքի հ.20 հասցեներում գտնվող բնակելի տներն իրացվել են, սակայն բնակարան կամ բնակարան ձեռքբերելու համար փոխհատուցումներ չեն տրամադրվել Գայանե Պետրոսյանի և Ալլա Մանուկյանի ընտանիքներին:

Երևանի Սպանդարյանի շրջխորհրդի գործադիր կոմիտեն լուծարվել է, իսկ փոխհատուցում տրամադրելու պահանջը Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի N 683 որոշմամբ ենթակա չէ կարգավորման:

Ելնելով վերոշարադրվածից՝ վերջիններիս բնակարանային հարցերը կարգավորելու նպատակով, ներկայումս անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան ավագանու որոշման նախագիծ՝ քաղաքացիներ Գայանե Պետրոսյանին և Ալլա Մանուկյանին բնակարանի գնման վկայագրեր տրամադրելու նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ